ՔԱՐՏԻ ԿՑՈՒՄ

Պայմաններ

1. «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) AMIO Mobile հավելվածին հնարավոր է կցել ArCa համակարգի անդամ հանդիսացող կամ հավաստագրում ստացող ՀՀ բանկի (այսուհետ՝ Թողարկող բանկ) քարտ և կատարել գործարքներ:
2. Հնարավոր է կցել միայն MasterCard կամ VISA վճարային քարտեր AMD, USD, EUR, RUB արժույթներով:
3. Քարտը կցելիս տվյալ քարտից կգանձվի 10 ՀՀ դրամ, որը հետ կփոխանցվի հաշված րոպեների ընթացքում:
4. Քարտի կցման և գործարքների իրականացման անվտանգությունն ապահովելու համար կիրառվում է 3D Secure տեխնոլոգիան (Verified by Visa / MasterCard Secure Code)՝ Բանկի սահմանած կանոններին համապատասխան՝ Թողարկող բանկի կողմից քարտապանին տրամադրված միանգամյա գաղտնաբառի մուտքագրմամբ:
5. Քարտը կցելիս տվյալ քարտի տվյալները կպահվեն Բանկի համակարգերում դրա հետագա օգտագործումն ապահովելու համար:
6. AMIO Mobile հավելվածին հնարավոր է կցել անսահմանափակ քանակի քարտեր:
7. Կցված քարտով հնարավոր է կատարել Փոխանցում Բանկում գործող սեփական բանկային/քարտային/խնայողական հաշվին:
8. Կցված քարտը արտացոլվում է AMIO Mobile հավելվածի «Քարտեր» բաժնում:
9. Կցված քարտով հնարավոր է կատարել փոխանցում միայն ՀՀ դրամով, ընդ որում փոխանցման ստացման հաշիվը պետք է լինի դրամային հաշիվ: Եթե կցված քարտի արժույթը տարբերվում է փոխանցման արժույթից, ապա փոխարկման գործարքը կատարվում է կցված քարտը Թողարկած բանկի կողմից՝ համաձայն վերջինիս կողմից սահմանված պայմանների:

Սակագներ

10. Քարտի կցումը կատարվում է հետևյալ սակագներով[1].

Գործարքի տեսակ	Սակագին
Քարտի կցում	Անվճար
Փոխանցում կցված քարտից Բանկում գործող սեփական հաշվին/քարտին	Կցված ԱՄԻՕ Բանկի քարտի դեպքում՝ 0.3%
	Այլ բանկի քարտի դեպքում՝ 0.5%
Քարտի հեռացում	Անվճար

[1] Անկախ սույն սակագներից կցվող քարտը թողարկող բանկի կողմից կարող են կիրառվել այլ վճարներ՝ համաձայն տվյալ քարտի պայմանների և սակագների:

11. Սահմանված սակագների համաձայն փոխանցման դիմաց վճարը գանձվում է կցված քարտի հաշվից գործարքի կատարման պահին՝ գումարվելով ելքագրվող գումարին: